



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՌԱ.Ա. Ռադիոէլեկտրոնիկայի և էլեկտրոնիկայի
Ինստիտուտի տնօրեն, Փ-մ.գ.թ.

«29» հունիսի 2023թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

**Սևակ Արշակի Ղուկասյանի «Բնտեղրալ սիեմաների նախագծման
միջոցների մշակումը ծերացման երևոյթների հաշվառմամբ» թեմայով,
Ե27.01 - «Էլեկտրոնիկա, միկրո և նանոէլեկտրոնիկա» մասնագիտությամբ
տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության վերաբերյալ:**

Ատենախոսության թեմայի արդիականությունը:

Վերջին տասնամյակում ինտեգրալ սիեմաներում (ԻՍ) առկա տարրերի նվազագույն չափերի փորձացման հետևանքովառաջանում են մի շարք երևոյթներ, որոնց ազդեցությունը հանգեցնում է ԻՍ-ների հուսալիության վատթարացմանը, որը էական նշանակություն ունի կախված ԻՍ-ների օգտագործման բնագավառներից:

Հուսալիության վրա ազդող երևոյթներից էական վատթարացման են հանգեցնում ծերացման երևոյթները, որոնք ԻՍ-ների աշխատանքի ընթացում ազդում են մի շարք կարևոր պարամետրերի վրա, վատացնելով ԻՍ-երի կարևորագույն բնութագրերը, կամանգեցնելով ընդհուպ մինչև խափանման: ՈՒստի անհրաժեշտություն է առաջանում ԻՍ-ների նախագծման փուլում հաշվի առնել ծերացման երևոյթները և համապատասխան միջոցների կիրառմամբ կանխարգելել ԻՍ-երի ծերացումը:

Այսպիսով, Ա.Ա. Ղուկասյանի «Բնտեղրալ սիեմաների նախագծման միջոցների մշակումը ծերացման երևոյթների հաշվառմամբ» թեմայով ատենախոսությունում առաջարկված ծերացման երևոյթների կանխարգելմանմիջոցների մշակման խնդիրն խիստ արդիական է:

Ատենախոսության բովանդակությունը, արյունքների և եզրակացությունների հավաստիությունը, դիտողություններ ձեռավորման վերաբերյալ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրահանգումից, 127 անուն գրականության ցանկից և 4 հավելվածներից(առաջին հավելվածում ներկայացված է

ատենախոսության ներդրման ակտը, երկրորդում՝ որոշ սխեմաների հրուց նկարագրության հատվածը, երրորդում՝ մշակված ծրագրային գործիքի QT նկարագրության որոշ հատվածներ, իսկ չորրորդում՝ օգտագործված նկարների, աղյուսակների և հապավումների ցանկերը): Ատենախոսության հիմնական տեքստը կազմում է 113 էջ, իսկ ընդհանուր ծավալը, հավելվածների հետ միասին՝ 150 էջ:

Ներածությունում հիմնավորված է ատենախոսական աշխատանքի թեմայի արդիականությունը, ներկայացված են՝ հետազոտության առարկան, աշխատանքի նպատակը, հետազոտության մեթոդները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ինչպես նաև աշխատանքի գործնական արժեքը:

Գլուխ 1-ում ներկայացված է ԻՍ-ներում ծերացման երևոյթների հաշվառման կարևորությունը, այնպայման ավորող հիմնական գործոնները, և դրանց ազդեցությունները տարբեր ԻՍ-երի վրա: Ներկայացված են նաև ԻՍ-ներում ծերացման երևոյթների ազդեցության նվազարկման գրականությունից հայտնի արդի միջոցները, դրանց աշխատանքի սկզբունքը, հիմնավորված են առկա թերությունները:

Գլուխ 2-ում ներկայացված է ԻՍ-ներում ծերացման երևոյթների ազդեցության նվազարկման նոր մեթոդներ, ինչպես նաև դրանց հիման վրա առաջարկվող համապատասխան սխեմատեխնիկական կառուցվածքները: Ներկայացվել են կատարված մոդելավորման արդյունքները և կատարվել է համեմատություն առկա լուծումների հետ:

Գլուխ 3-ում ներկայացված է առաջարկված մեթոդների հիման վրա ստեղծված “Aging Monitoring Compensating and Minimization Tool” ծրագրային միջոցը, որի օգնությամբ կատարվում է առաջարկված մեթոդների իրականացում: Ծրագրային միջոցի կիրառումն է ական չափով կրճատում է առաջարկվող մեթոդների կիրառմամբ ԻՍ-երի նախագծման և ստուգումների ժամանակը:

Եզրակացությունները հանդիսանում են հետազոտման տրամաբանական եզրափակում՝ հիմնավորված կատարված փորձնական մշակման արդյունքներով, լիովին համապատասխանում է ատենախոսությունում նկարագրված մոտեցումներին, դրույթներին ու մեթոդներին: Առաջարկված բոլոր մոտեցումները ձևակերպված են պարզ և կոնկրետ, արտացոլում են աշխատանքի էությունը, անմիջականորեն հիմնավորված են ատենախոսության բովանդակությամբ և ունեն կիրառական մեծ նշանակություն:

Արդյունքների և եզրակացությունների հավաստիությունն ապացուցված է գիտափորձարարական հիմնավորումներով:

Հետազոտությունների և արդյունքների նորույթը:

Ասենախոսությունում առավել մեծ գիտական արժեք են ներկայացնում՝

1. Լարմամբ դեկավարվող գեներատորներում ծերացման երևոյթների ազդեցության փոխհատուցման եղանակը:
2. Ինտեգրալ սինեմաներում ծերացման երևոյթների մշտադիտարկաման և գրանցման ներբյուրեղային մեթոդը:
3. Միայն փականի բարակ օրսիդի շերտով տրանզիտորներով երեք տեսակի օպերացիոն ուժեղարարներում ծերացման երևոյթների ազդեցության նվազարկման եղանակը:
4. Ծերացման երևոյթները հաշվի առնող թվային ստանդարտ բջիջների գրադարանների նախագծման ճշտության բարձրացման մեթոդը:
5. Ինտեգրալ սինեմաների հուսալիության բարձրացման “Aging Monitoring Compensating and Minimization Tool” ծրագրային գործիքը:

Աշխատանքի գիտական նշանակությունը:

- Մշակվել է լարմամբ դեկավարվող գեներատորներում ծերացման երևոյթների ազդեցության հետևանքների փոխհատուցման եղանակ, որի արդյունքում, թվային ունիտար կոդով դեկավարմամբ սինեմայի ավելացման շնորհիվ, հնարավոր է եղել ելքային ազդանշանի հաճախության 6,5% նվազումը փոքրացնել՝ հասցնելով 0,31%-ի՝ 13,6% մակերեսի և 15,1% էներգասպառման աճի հաշվին:
- Ստեղծվել է ինտեգրալ սինեմաներում ծերացման երևոյթների մշտադիտարկման և գրանցման մեթոդ, որի շնորհիվ հնարավոր է գրանցել ծերացման երևոյթները սինեմայի ելքում ստանալով թվային կոդ և այն օգտագործել փոխհատուցող սինեմաներում: Եղանակը իրականացվել է միայն մետա-օրսիդ-կիսահաղորդիչ տրանզիտորներով, և ինտեգրալ սինեմայի վրա ավելորդ ելուստներ և թեստավորում չպահանջելու արդյունքում՝ հանգեցնում է մակերեսի, թեստավորման ժամանակի, ինտեգրալ սինեմաների արժեքի նվազման և հուսալիության բարձրացման՝ զբաղեցնելով ընդամենը 10 մկմ² մակերես և սպառելով 300 մկԱ հոսանք:
- Նախագծվել է միայն փականի բարակ օրսիդի շերտով տրանզիտորներով երեք տեսակ՝ երկկասկադ, ներդրված կասկոդ և դողից-դոդ օպերացիոն ուժեղարարներում ծերացման երևոյթների ազդեցության նվազեցման եղանակ: Վերջինիս դեպքում, կասկոդ տրանզիտորների և թվային բանալիների ավելացմամբ, ինչպես նաև անջատող ազդանշանի ամպլիտուդի փոփոխության միջոցով՝ տրանզիտորներին սրբեսից պաշտպանելով՝ հնարավոր է եղել չեզոքացնել երկկասկադ օպերացիոն

ուժեղաբարի 25,8%, ներդրված կասկող օպերացիոն ուժեղաբարի 22,3% և դողից-դող օպերացիոն ուժեղաբարի 23,3% ուժեղացման գործակիցների նվազումը՝ մակերեսների համապատասխանաբար 3,2%, 4,8% և 7,1% մեծացումների հաշվին:

- Առաջարկվել է ծերացման երևոյթները հաշվի առնող թվային ստանդարտ քիչների գրադարանների նախագծման ձշտության բարձրացման մեջող, որի դեպքում, քիչների մուտքային ազդանշանների միջև հնարավոր փուլային շեղվածությունները հաշվի առնելով, հնարավոր է ստանալ մինչև 24,5% նախագծման ձշտության բարձրացում՝ մոդելավորման տևողության 2-3 անգամ մեծացման հաշվին:

Ստացված արդյունքների կիրառական նշանակությունը:

Ատենախոսությունում մշակված ծերացման երևոյթների հաշվառմամբ՝ ինտեգրալ սխեմաների նախագծման միջոցներն իրագործվել են “Aging Monitoring Compensating and Minimization Tool” ծրագրային միջոցում, որը ներդրվել է «ՄԻՆՈՓԱԻՍ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ում և թույլ է տվել կրճատել սխեմաների նախագծման և ստուգումների ժամանակը 2-3 անգամ։ Առաջարկված մեթոդների իրագործումը՝ “Aging Monitoring Compensating and Minimization Tool” ծրագրային գործիքի միջոցով, թույլ է տվել միջին չափով 6,19-25,8%-ով նվազեցնել ծերացման երևոյթների պատճառով ինտեգրալ սխեմաների պարամետրերի վատթարացումը՝ կիսահաղորդչային բյուրեղի վրա գրադարած մակերեսի 3,2-13,6% մեծացման հաշվին։

Աշխատանքի համապատասխանությունը ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին:

Ատենախոսությունն իր արդիականությամբ, նորությամբ, ծավալով, հիմնավորմամբ, ձևակերպմամբ և հիմնական արդյունքների կարևորությամբ համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին։

Հրապարակումները:

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են հեղինակի 6 գիտական աշխատանքներում։ Մեղմագիրը լիովին համապատասխանում է ատենախոսությանը և արտացոլում է դրա հիմնական դրույթները։

Նկատված թերությունները:

1. Տեղ են գտել որոշ լեզվական և ուղղագրական անձշտություններ ու ոչ հստակ ձևակերպումներ։ Որոշ նկարներում նշանակումները, առանցքները բնորոշող ֆիզիկական մեծությունները, ինչպես նաև նրանց արժեքները արտահայտող թվերը հստակ չեն կարդացվում։ Պաշտպանության ներկայացված գիտական դրույթները ըստ

Էռության ձևակերպված են ավելի շուտ որպես ուսումնասիրվող խնդիրներ քան դրույթներ:

2. Որոշ երկրորդային պարամետրերի համեմատությունները որակական բնույթի են, մինչդեռ քանակական ցուցանիշների ներկայացումը կնպաստի կիրառելիության աստիճանի գնահատմանը:


Չնայած նշված թերություններին, Ս.Ա. Ղուկասյանի ատենախոսությունը կատարված է բարձր մակարդակով, ունի գիտական ու գործնական մեծ նշանակություն, ավարտուն տեսք և արդիական է:

Եզրակացություն

Ս.Ա. Ղուկասյանի «Խնտեգրալ սխեմաների նախագծման միջոցների մշակումը ծերացման երևույթների հաշվառմամբ» թեմայով թեկնածուական ատենախոսությունն ավարտուն աշխատանք է, որը կատարված է բարձր գիտական մակարդակով և ունի մեծ գործնական արժեք: Իր ծավալով և գիտական մակարդակով լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, բովանդակությամբ համապատասխանում է Ե27.01 - «Էլեկտրոնիկա, միկրո և բովանդակությամբ համապատասխանում է Ե27.01 - «Էլեկտրոնիկա, միկրո և նանոէլեկտրոնիկա» մասնագիտությանը, իսկ հեղինակն արժանի է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը գեկուցվել, մանրամասն քննարկվել և հավանության է արժանացել ՀՀ ԳԱԱ «Ռադիոֆիզիկայի և Էլեկտրոնիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ 2023 թ. հունիսի 29-ին կայացած գիտական սեմինարում: Ներկա էին՝ ֆիզ. դոկտոր Ս. Պետրոսյանը, ֆիզմաթ. գիտ. թեկնածուներ՝ Ա. Մուսայելյանը, Ա. Եսայանը, Ս. Ներսեսյանը տեխ. գիտ. թեկնածու Ն. Եզակյանը և ՌՖԷԻ-ի այլ գիտաշխատողներ:

Կարծիքը ձևավորեց և ամփոփեց
ՌՖԷԻ-ի «Կիսահղործային նանոէլեկտրոնիկա»
լաբ.-ի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, Փ.Ա.Գ.Դ.

 Ս. Պետրոսյանը

Ս. Պետրոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ ՌՖԷԻ-ի փոխ. տնօրեն,

Է. Ասմարյան

